



ԾԱՆՈԻՑՈՒՄ

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը խոր վշտով կը գուժեն մահը իրենց հոգեւոր մշակին՝

ԱՐԺԱՆԱՊԱՏԻԻ Տ. ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԳՌՈԶԵԱՆԻ

1934 - 2004

որ ի Տէր հանգեաւ, Երեւնաբի 16 Մարտ 2004, կէսօրէ ետք ժամը 3-ին Բեքղեհեմի վանուց մէջ:

Մարմինը Ս. Յակոբայ Տաճար պիտի փոխադրուի, այսօր, Զորեմբաբի, 17 Մարտ 2004-ին կէսօրէ ետք ժամը 4-ին:

Վերջին Օծման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 18 Մարտ 2004-ին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատուցուելիք Ս. Պատարագի ընթացքին ժամը 9-ին:

Յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ Թաղման արարողութիւնը, որմէ ետք մարմինը պիտի ամփոփուի Ս. Փրկչայ Գեղեզմանատան մէջ:

Յետ արարողութեան պիտի հրամցուի ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի մէջ ՀՈԳԵՍՈՒՐՃ:

«ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՆ»

Գ Ի Ի Ա Ն Ս. Ա. Թ Ո Ռ Ո Յ

17 Մարտ 2004

Ս. Ա.ԹՈՐ

ՀԱՆԳԻՍՏ Տ. ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԳՌՈՋԵԱՆԻ

Բեթղեհեմ - Ս. Ծննդեան Տաճարի եւ Բեթղեհեմի Հայոց Վանքի տեսուչի օգնականներէն Տ. Ներսէս Քհնյ. Գոռգեան ի Տէր հանգեաւ 16 Մարտ 2004ին:

17 Մարտ 2004 կէսօրէ ետք, ժամը 4-ին նորոգ հանգուցեալ Տ. Ներսէս Քհնյ. Գոռգեանի մարմինը բերուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար եւ կատարուեցաւ Տան Կարգ:

18 Մարտ 2004, Հինգշաբթի, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատուց Տ. Խաղ Արդ. Ճոնատուրեան: «Ողջոյն»էն առաջ Տ. Ներսէս Քհնյ. Գոռգեանի դագաղը վարդապետներ խորան քարձրացուցին: Լուսարարապետ Սրբազանը կատարեց Վերջին Օծումը, իսկ Պատրիարք Սրբազանը խօսեցաւ դամբանականը: Միաբանութիւնը եւ ժողովուրդը հանգուցեալ եկեղեցականին աջը համբուրելով իրենց վերջին յարգանքը մատուցին:

Ժամը 10ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Հանգստեան Կարգ, ապա կազմուեցաւ քաղմանական թափօր, որ մինչեւ Ս. Փրկիչ միաբանից գերեզմանատունը չորս անգամ կանգ առնելով, հոգեւոր երգերով եւ հանգստեան Աւետարաններու ընթերցմամբ, հանգուցեալին մարմինը առաջնորդուեցաւ դէպի իր յաւիտեանական կայքը:

Թաղման Կարգէն ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը թափօրով վերադարձաւ դէպի Ժառանգաւորաց Վարժարանի սրահը ուր տրուեցաւ հոգեսուրն:

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ. Ներսէս Քհնյ. Գոռգեան ծնած է Պէյրութ (Լիբանան) 1934ին: Ունի չորս քույր եւ երեք եղբայր: Որպէս դպիր եւ ուրարակիր ծառայած է Պէյրութի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ: 1970ին ամուսնացած է Սիրվարդ Ֆարանեանի հետ եւ ունին երկու մանչ եւ երկու աղջիկ զաւակներ (Գէորգ, Վարդան, Սօնիա, Զարմիկ): 1974ին փոխադրուած է Սիտնի, Աւստրալիա: 1975ին Սարկաւազ կը ձեռնադրուի, եւ 1976ին ֆահանայ կ'օծուի, Աւստրալիոյ Առաջնորդ Գարեգին Արք. Գազանեանի ձեռամբ, եւ մինչեւ 1989 կը ծառայէ Աւստրալիոյ Մելպուրն ֆաղափի Հայց. Եկեղեցւոյ մէջ:

1989 թուին Նրուսաղէմ ուխտի եկած է, եւ ընդունուած է որպէս ժամարար-միաբան Բեթղեհեմի Սուրբ Ծննդեան Տաճարին մէջ ծառայելու:

Ներսէս Քհնյ. Գոռգեան մինչեւ իր կեանքին վախճանը հաւատարմօրէն ծառայեց Սրբատեղեաց մէջ իրրեւ պատարագիչ եւ պաշտամունքներուն բժախնդրօրէն մասնակից անդամ: